երը այդտեղի խանների ներկայացուցիչները մայրաքաղաք էին եկել հնազանդութիւն յայտնելու երկրի օրինաւոր իշխանութեանը, նոյն այդ միջոցին Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայով ռուս բոլշեւիկ զօրամասեր հասան Նախիջեւան, ձեռք մեկնելու Դարաբէքիր փաշային եւ նրա տեղական գործակալներին, բայց նաեւ՝ բեռներով ոսկեդրամ ճամբելու դաշնակից Քեմալին:

Այդ մասին հօ բաւական բան յայտնի էր առաջ, շատ բան էլ պարզեց Անդորայի դատը 1926–ին:

Այդ պատմութիւնը չէ անելը միտքս, այլ այն, որ 1920–ի ամրանից սկսած արդէն՝ Հայաստանը հողային եւ բնակչութեան տեսակէտով նորէն փոքրանալ սկսեց, առաջին հերթին բոլշեւիկ ռուսների հարուածների տակ, որոնց պիտի հետեւէին յետոյ, աշնանը, նրանց դաշնակցած քեմալականների հարուածները:

Ուրեմն 1920–ի ամառը դեռ՝ Հայաստանից փաստօրէն պոկել էին ոչ միայն Ղարաբաղը եւ Նախիջեւանը, այլ եւ մի որոշ ժամանակ, Զանգեզուրը: Քեմալ–բոլշեւիկ համաձայնութեան հետեւանքով — Հայաստանը բաժանելու խնդրում — առաջին քայլերը անողը եղաւ ուրեմն Մոսկուան: Անդորան հետեւեց նրան, աւելի ծանր հարուածներ իջեցնելով լքուած ու դաւաճանուած Հայաստանի գլխին: Բոլշեւիկները Հայաստան եկան՝ այն նորից ընդարձակելու եւ մեծացնելու խաբեպատիր խոստումներով — Ղարաբաղի, Նախիջեւանի եւ այլ շրջանների վերադարձման պաշտօնական եւ գրաւոր յանձնառութիւններով:

Բայց բոլշեւիկները ոչ միայն իրենց տիրապետութեան առաջին օրերին, այլ եւ այժմ, եօթ տարի անց, ոչ իսկ եօթը թիզ հող են աւելացրել այն տերրիտորիայի վրայ, որ նրանց ժառանգութիւն էր մնացել երկրի թէեւ պարտուած ու ջախջախուած, բայց հարազատ ու հայրենի իշխանութիւնից:

Անդորան խորհրդայնացած Հայաստանին մի թիզ հող անգամ չվերադարձրեց Կարսից ու Սուրմալուից: Ոչինչ չվերադարձրին նաեւ Վրաստանը ու Ատրբէջանը, հակառակ վերջինիս հրապարակային եւ հանդիսաւոր խոստումներին: Ու հետեւանքը եղաւ այն, որ Ալեքսանդրապոլում Հայաստանի եւ Տաճկաստանի միջեւ ուրուագծուած, աւելի շուտ, Անդորայից թելադրուած համաձայնութիւնը վերջէն Մոսկուայում ու Կարսում վերածուեց տեւական դաշնագրի, դնելով Հայաստանի եւ Տաճկաստանի միջեւ նոյն այն սահմանները, ինչ ներկայացուած էր Ալէքսանդրապոլում: Նախիջեւանն էլ, Անդորայի պահանջով, հրամցրուեց Ատրբէջանին:

Թէ ո՞րչափ տարածութիւն է ներկայացրնում այդպէս սահմանորոշուած Հայաստանը, այդ մասին խօսք եղաւ արդէն:

Իսկ ո՞րն է նրա պատկերը ազգաբնակութեան կազմի տեսակէտից: Այդ մասին էլ առաջ բերինք, դեռ առաջին յօդուածում, բոլշեւիկների հրատարակած թուական ընդհանուր տեղեկութիւնները, թէեւ յաճախ հակասական իրարու:

Մի փոքր մանրամասնենք այդ ամէնը եւ կանգ առնենք նրանց վրայ, քանի որ կենսական նշանակութիւն ունին մեր երկրի ու մեր ժողովրդի ապագայի տեսակէտից:

1926–ի մարդահամարին նայելով, որ բաղդատաբար աւելի վստահարժան է, քանի որ կազմակերպուած է եղել ոչ թէ սովորական՝ վարչային եղանակով, այլ համապետական չափանիշով եւ նախապատրաստուած միջոցներով, Հայաստան 1926–ին բաժանւում էր 8 գաւառների եւ 1 շրջանակի (Մեղրի), հետեւեալ բնակչութեամբ (քաղաքները մէջը չեն հաշուած):

1· Երեւանի գաւառ	110,298
2· Դարալագեազ	28,494
3 Դիլիջան (Իջեւան)	69,706
4· Էջմիածին	100,325
5· Զանգեզուր	64,676
6· Ալէք–պոլ (Լենինական)	123,783
7· Մեղրի	6,944
8· Նոր–Բայազիտ	91,109
9· Լոռի–Փամբակ	114,407
Գումար	709,742

Նոյն այդ միջոցին Հայաստանի քաղաքների բնակչութիւնը եղել է 157,804, որով Հայաստանի բովանդակ ազգաբնակութեան թիւը՝